

Նակութեան արժանի զիպուածին՝ զոր նոյն տանց հայկական թարգմանութիւնն կ'ընձայէ մեզ, ինչպէս քիչ յետոյ պիտի առևնենք: Վասն զի կը ցուցընէ մեզ, թէ որյ ձեռքով եղած է այդ երկուասան վերջին տանց բաշակայութիւնը, և հաւասար մ'է, թէ անոնց կանոնականութեան և վաւերականութեան գէմ ի Հայոյ յարուցուած երկրայութիւնը համեմատաբար նորագոյն ժամանակաց պէտք է վերաբերին:

« Ինչ կերպով ալ ուզենակ նկատել, Եղնըկայ կողբացւոյ վիայութիւնն, առաջին կարզի վկայութիւն մ'է՝ ի պատմական ուսումնասիրութեան Քակառակութեանն զոր կը րած է մարդուեան աւետարանին վերջառութիւնն:

« Թէ երբ զըազրաց միջէն վիրցուեցաւ այն, և մինչև խաչակրաց ժամանակ անծանօթ մը՝ նաց Հայոց, կը բացատրուի ի պատմութենէ իրենց թարգմանութեան: Հինգերորդէն մինչեւ տասներորդ գար ապրող Հայ մասենազրաց մէջ ամենաբիշ են որ երկրորդ աւետարանին վերջին տասներու յիշառակութիւնն ընեն. և հին մեկնիշ մը, Բարսեղ Ճոն, որյ երբ ապրիլը սապրդ չէ, իր մեկնութիւնը կ'աւարտէ:

զի երկնչէին խօսքերով. թէպէտ իր գրուածքը ամբողջ է վեհենեսակց մատենազարանին զըրշագրաց մէջ, և յապաւման նշան չունի⁽¹⁾:

Միին դարու վերջին՝ աւետարանին մեկնիշը կը սկսին մասն սեպել Մարփոսի այն տուները, և կամաց կամաց հայկական եկեղեցւ կարծիք այս կտտին վերայ կերպարանափութիւն կրելով՝ վաւերական կը սկսին համարիլ այն մասը, որ մերժուեր էր յառաջազյն՝ եւաերեան անուան մեծ ազգեցութեամբ, և ինչուան հասարակաց ազօթից և ժամանակարգութեան մէջ մուտ կը գտնէ, համբարձման տօնակմբութեան օրը՝ յետ պնդասանի ընթերցմամբ յատենի»:

Հեզինակը նոյն հասորին 325—340 էջերը կը նստիրէ երկար և հետաքննական ուսումնասիրութեան մը՝ հայ թարգմանութեան մէջ գտնուած կրկին և իրարմէտ տարբեր թարգմանութեանց երկուսասն տանցդ, յորոց մին յաստուածացնչ զիրս հրատարակուածն է, և միւսն ի բազմալիսի, 1883 ամին յէլ 242:

1. Մաշեւորիին հետ կը շփոթէ, զի այս յեննս է մեկնիշն ի սկզբն մէ՞ դարու:

Հ. ԲՈՒՍԱՐԱՌՈՒԹԻՒՆ

3060. Փիլունց.

Տրապիզոնեցիք այս անուամբ և յատուկ մակդիրներով այլ՝ կոչեն քանի մի տեսակ խոտեղն Պատերներ, որ շաբթ մ'ոն սերեւց, որոց իւրաքանչիւրն բաժնուած ի մանրաձեւ երկայն սրած այր մասեր, իւրաքանչիւր մասն այլ դարձեալ ի փոքրիկ տերեւներ բաժնուած գէմ առ դէմ, և ուսանց նա եւ այս տերեւիկն այլ ամենամանը բաժնուանձեւ կամ մասեր ունին, և ամենքն այլ սուր ժայրով մի վերջանան. մէջ տեղի չին կամ կոթն այլ՝ որոյ եզերքին շարուած են, նոյնպէս սուր ծայր մ'ունի. շատ գեղեցիկ մանրաքար տեսք մի կ'ընծայեն — Սոսկ Փիլունց կոչուածը՝ բուսագէտք ճանցան լ. Ասրիծաւ առելատ, Փ. Ասրիծ ճ օլե րօմէօ, այսպէս կոչուած՝ ամբշաւլզին կրոսձեւ վահանի նմանութենէն, որ Յ. Ճուուի, ինչպէս և Հ. այլ Ասպար: Այս տեսակս գտնուի ի Պանտոս և Կոմիսար երկու կողմն այլ: — Արշիփիունց (թ. 237) աւելի լայն է տեսքով կամ երկայն մասներով, որոյ տերեւիկն այլ քիչ մաւելի մեծակալ: Բուսագէտն տեսնելով մեզի խաւրած թերթը՝ ճանցալ:

մաշար ըսել է կամ Բազմաստեղն, նոյնն կոչուի և Արու Պտեր, *Filix* տաճ. որոց հակառակ Եղափիրունցն (թ. 629) կոչուի իդ Պտեր, *Filix* հօտուա, այլ և Արքունիում, որ և Հ. Խոտուա կոչուի. այսոր տերեւիկքն ստորաբաժանեալ Նշմարին յամենամանը մասնիկու:

3061. Փիճի.

Եատ հեղ Ար. բառով Սնովպար կամ Սնոնպրի կոչուած առ նախնիս մեր, յշխած և Սանովպար որ է Փիճին, գրէ Ամիրու. լաւն այն է որ սպիտակ և թաժա լինի.. զիրցնող է. և իր հոտն օգտէ ըսահային (գողդղալ) և իսու « թըրիսային (իրգողութեան). և թէ զկեղեւն եփեն և թէ զջուրն խաղաղ առնեն, ո զպաղզամն քակէ, և օգտէ ակուային. և իր մոււն օգտէ այնոր՝ որ արտեւան նունքն թափի: — Եւ ցեղ մի այլ կայ՝ որ այլ մանր կու լինի, և այլ տաք է. ո և առ ի յիրմէն և ծեծէ և մեղրով շաղվէ. յամէն որ ուտեն երեք գրամ, օգտէ ո ֆալին «, եւ այն։ — Դարձեալ գրէ. « Սանովպար, ինքն վարին (Մարի) ո է. արէկն գէրն է.. ասէ Սահակ բժիշկն՝ թէ ինքն ի Եւէէն է », (թ. 229).

Արակախօսն մեր՝ մեծ և բազմաճիւղ ծառոց կարգին չի գներ զՓիճի և զՀանարի, վասն զի, կ'ըսէ, « Ոչ են բազմուած, և ոչ հողմօց ընդգիմանալ կարեն, ո ի խոր արմատու ոչ ունելով »: Վաստկ, զրոց հեղինակն կամ թարգման՝ զանազանէ (ՀԱ) զՓիճի և զՍնոնպրի. երբ իրատէ զՈւթատունին հանել ո ի Փիճի ո կամ ի Սնոնպրի կամ ի Բարտի ո և եւ այն։ Դասիելի Սաղմոսաց մեկնութեան մէջ ի Ձեռագիրս, ուր Մայր փայտ դրուած է, ի լուսանց գրոցն Փիճի է դրուած: — Թէ և անսպուալ ըլլարով՝ անարգ ծառոց կարգին գնէ զայն՝ Ռուկիրերանն, և խրատէ բարդացագէչի տնկել Փիճի և Ցրդի, այլ պտղաբր ծառեր, սակայն մշակութեան մէջ այլ եւ այլ օգուտներ ունի, ինչպէս նշանակէ վերոյիշեալ Վաստկ. գիրքն, (ՀԱ. Տ. 1. Խ. 1. Ե. 1.): Իրեն յարմար գետինն՝ չորայինն է կ'ըսէ (Դ), ինչպէս և Տօսախինն։ — Եինուածոց այլ ի բան գալուն՝ վկայեն մեր պատմիշք (Ստ. Օրպէլ. Ճ.) զի երբ Հէլազու դան Թաթարաց՝ ի Դառան դաշտի մեծ արքունիք մի լինել կու տար, խաւրեց Սմբատ Օրպէլեան իշխանը ի Բասեն. որ Սնովպար փայտ կտրել և բերել տայ: — Լ. *Pinus sylvatica*. Թերեւս սոյն տեսակն է՝ Կարլ. Քոխ բաւարգէտա բժիշկին *P. Armenta*, Հայկական Փիճի կոչածն. բայց պէտք է գիտնալ, որ *Pinus* անունն՝ այլ եւ այլ տեսակ և ազգ ծառոց կու արուի, որք մէկմէկ ուրիշ բառով կամ մակդրով կ'որոշուին իրարմէ: — Բաց ի հասարակ Փիճին՝ յիշուի առ մեզ և

3062. Գետնի Փիճի որ և Գետնի Սոնովպար.

Որպիսութիւնը տես Ճամկխոտ և կենարար անուամբք: Յիշուի և Փիճոյ յսէժ. որով սպորաբար կ'իմացուի ծամելու Ջութն կամ Ցիկնակին. Բժշկարան մի գրէ. « Փիճոյ յսէժ, Բարիհանայ, Ռաթինան (Ռիտին), ինքն երկու ազգ է, մէկն « յրի է և մէկն չոր է »:

3076. Փշատ. Փշատի. Փշատենի.

Վայրի պտղատու ծառ մի, Լ. *Elaeagnus*, Փ. *Chalef*, Թ. իկտէ. Ար. Ղուպէիրա, Ենինք, ըստ Ամիրու. և Ղուպայրա. Հ. Փշատ ասեն և Պ. Սանձատ « ասէ, և Թ. իկտա ասէ. և լաւն այն է որ յիստակ լինի և մալի լինի... կապող « է և շի թողուր որ պտղաբար ի զլուին ելանէ... իսպն. ասէ, թէ զծաղիկն ժողովն « և յիրմէն ճիւղ մի կտրեն՝ որ ի ծայրն մէկ տերեւ ունենայ, և զայն ծաղիկն

ո ի հռն շարեն և կըլայ (օղ, պատկ) այնեն, և զգլուխն բանան և ի զլուխն ան-
ո ցընեն, զմարդն ուրախ առնէ և զհողան տանի ու — կովկասի ամեն կողմե-
րում այլ գտուի, որով և ի Հայու այս վլուտ ժառա, որ նշանաւոր է իր Զիթենոյ
ձեւով պտղովը, որոյ միջուկն փոշիանման է և շաքարի պէս քաղցր:

3077. Փշաքեղ. Փշրաքեղ. Փշագեղ.

Լ. Եղիտու. Ար. Կոշց. « Բահման, որ Հ. Փշաքեղ կ'առեն. և ինքնի Սուսան-
ո ներուն ցեղերուն է, կտոր կտոր տակեր է, կարմիր և սպիտակ այլ կու լինի. լաւ
ո այն է որ կարմիր լինի և պինտ և ժալծու. զիրացրնող է և զիրտն ուժովցընող
ո է և ուրախցընող է.. և ինքս ի գիրութեան գեղերն կու մտէ, և իր տալուն շաբն
ո մէկ զրամ է. և զիր շարսթիւն տանի Անիսանն ու Այս տեսակս Բահման
կարմիր կ'ըսուի. կայ և Սպիտակն. Ար. Կոշուած ձևան ձևաց, և Եղրապաշանա-
ո որ Թ. Սաղ որ ասէ (որպէս և Փ. Ներե սայն). ինքն խոտ-մն է՝ որ տե-
ո բեւին յերկայնութիւնն թիգ-մն է, և տերեւին միջն որձայ կու ենիէ, մէջն
ո փուն և բոլոր կու լինի, և ի կիսէն ի վեր մանոր տերեւ ունի, և շատ ա-
ո մաննի ունի որպէս սագու ոտք, և ի վրան ժիրանի ծաղիկ ունի, սպիտակ կու
ո քշտէ, և ամսուն մէջն ի իի և կաղչուկ լինի, և քաղցրկեկ կու լինի... և ինքն
ո ի փու տեղեր և ի խանտակն (ակօս) շատ կու բուսնի, Եւ ոմանք ասեն թէ
ո այս տակս Սպիտակ Բահման է ։ Փ. Եղիտ Ելաս, որ և Carnillet, Լ. Ca-
ռաւալս Behen, Թ. Մարտիրոս ըստ ոմանց է Լ. Statice Li-
տոնium, ըստ այլոց Rysalis Առասու. — Պէյթար կ'ըսէ որ երկուսն այլ կու
բերուին յերկրէ Հայոց և ի Խորասանէ: — Բժշկու. մի Բահման համարի և
Փշաքեղ և զվալվուկ:

3080. Փոթորնի.

Գրայիեն. բառք զրեն, ո Եղիիրիմնմ, ծաղիկ վլայրենի Փորորմոյ ։ Պէյթար Յ.
բառովն զրէ. Կոշտէ, յորմէ և Ամիրու. « Ամբիմնմ, որ է Ֆո. Էղիրիմն. ինքն
ո յայտնի խոտ-մն է՝ որ ի շր տեղեր կու բուսնի, և լաւ այն է որ կարմիր
ո լինի և հունդ ունենայ, և ի վերայ Սաթրուն բուսնի. և այն որ յերուսաղէմ
ո և ի լրիա լինի՝ լաւ է, և հոտն սուր և բարակ լինի.. և լուծումն կ'առնէ..
ո օգտէ և խպիկ ցաւուն և պիտակին և մանին, և սպին որ յերեսն լինի, և
ո զանձն յիսորդիկ և սրբէ, և զանդուին և զիսափաղանն և զսավոտն տանի..
ո և զամենայն ազգ ճրճն հանէ.. Ասէ Պո. Թէ ինքն ծաղիկ է և հունդ և
ո որձայն է ։ Եւալյն: — Յ. Եւալյոս անունն, Մոթրինի-վրայ ըսել է. ինչպէս
Ամիրու. այլ ըսաւ և ի վերայ Սաթրուն բուսնի ։ այսինքն կու պլըբի կամ
փաթթըլի, անոր համար կ'ըսուի և Բաթկենի (որ պէտք էր Փ. տափի գրաւիլ,
ինչպէս Փոթորնին այլ Փոթուսնի) և Գայլ խոտ, տես թ. 277, 409. Լ. Սասուտա
Երիթոստ. — Տեղաբնիք լինած են ի Փ. Ալիս և ի Կովկաս, գոշակուի և ի
**Հայու. հօս ճանշցուած է Եղրապահնան կոշուած տեսակն, Ը. Europea. ուրիշ տե-
սակներ եւս Կովկասու երկու կողմերում։**

3085. — Կաթնիուղիք.

Լ. Մոլցօն, Փ. Molgobie. որ կթուն ըսել է, և նշանակէ բուսոյն կաթոս
հիթ մ'ունենալն. Հ. անունն այլ զայն կու յայտնէ. խոտեղէն է երկայն կոթով
եռանկիւնածեւ տերեւներով, նոյնակս երկայն կոթով վնշաձեւ ողկուզաձեւ մանր
սպիտակ և քիչ մի կապոյտի քշող պարզ ծաղկներով։ Թէպէտ տեսպով նմա-

Նութիւն շռնի՛ բայց ուրիշ մասսամբ Հազարի ցեղէն է . այլեւայլ տեսակներ այլ ունի , որոց յատկադրյան Կաթնփուղըն է , *Cocalis folium* , ծանօթի Պանտոս , յիմերէթ , Վրաստան . — M. *Macrorhynchium* (Երկայնատերեւն) ի Ծ-Հ . ի Վիրա , Կովկաս . — M. *Albanum* ի Մանախ , Թէքտաղ է . Ճիմի է . — M. *Burgosii* ի Տրպարդան . — M. *Salicifolium* յՈթի .

3118-16. Փրփրեմ. Փերփեր. Փրփրերան.

Որ և Անմեռուկ , Կոճկորակ . ծանօթ խաւարտ ուտելի . լ. *Portulaca* . Փ. Pourpier , Ռ. Պորշուցք որ նմանութիւն ունի Հ . անուան . Ար . « Պախար և ըլ-համեր (الحمدل العلاق) որ է Փրփրեմ , Փրփրեմին հռնդն . լաւն այն է որ » նոր և գալոր լինի , և տերեան լայն լինի . ամենայն ցաւու օգտէ որ ի սաֆրայէ » լինի , և որ մաղձ ժողովէ ի յաղիքն . և երկիւմանցաւի և ամենայն ցաւու որ ո ի սաքութենէ լինի . . . Ասէ զրոց լինողն , թէ Պ . Պարսիւանուարու կ'սաէ . և » ի Երազ Քաւարտ կ'ասեն . և ցեղ-մն այլ անուն՝ որ Սորիս-մուրտիկ ասեն ո : — Բժշկարան մի գրէ . և Պախար ըլ-Երամանիս . յԱմսախա այս խոտիս Փրփրեմ ո անայի կ'ասեն ո , այսինքն վայրենի . Գոյցէ այս այլ մեր Ամիրտ . խօսքն է . որ գարեւել գրէ . ո ինքն խառ է , ի գետինն կու ճապդի , Փրփրեմ ասեն , և սեւ ո հռնդն ունի . աղէկն վայրին է ո : — Յ. Խնճաչչյանունը՝ հին Բաազիրք մի գրէ . ո Սնդրբեն . Փերփերան կամ կոճկորակ կամ Անմեռուկ ո : Ուրիշ մ'այլ . և Փրփրեմ , որ է Թուխմարտն որ է Քօրն , որ է Պախար ուլ-համերն ո : — Մի . Հերացի՛ մահարատամէ պատճառատ ջերմի դեղ գրէ և զՓրփրեմի հընտի ո կաթն » :

3153 . Քարախունկ .

Այս տեսակ Խնկի զուգանիշ գրէ Բառզիրք մի՝ Մողկագրակ (Մուլլ-ազրախ) . հին Բժշկր . այլ կ'ըսէ . և Քարախընդին գործ , որ եր մարդոյ սուր դեղ տան ո և պատրաստին ի փորանցութենէ , թէ զաղիքն քերթէ՝ զինքն ի հետ տան որ ո անվնաս պահէ . օգտէ և արնգան ո : — Ուրիշ Բժշկր . Թեղօշ ծափ խիճն է , կ'ըսէ : Քարիենսոփ բառից մէջ Բդեյինք բառի զուգած է , որ է Յ. Յէլլիու , լ. *Bdellium* : Խորեն . Աշխրհ . Արցախ Կողթ գաւառի բերք գրէ զՔարախունկ : Հիներն այս Բդեյինք Կոչուած ինէքը՝ Բարսանի ծառերէն հանէին , որոց ամենէն ընտիրն էր յԱփրիկէ . Քարախունկ կ'ըսուէր , ըստ ոմանց , քարի պէս կարծրանալուն համար :

3158 . Քարաւէ . Քարուէ . Քարաւիա .

Բատ Ար . Կոշուի և կրտմանա . Լամաչչ , Կրտիմն , Ղրտիմա , Խրտուամա . ըստ ոմանց է Ճապուսն , լ. *Cardum* . ըստ այլոց՝ *Cardamine* , Ջրկոտեմի տեսակն Հին Բժշկր . յիշէ բնութիւնը , « Տաք և չըր է . հանէ ի փորց գտափակ նիճի . . ո զփորն կապէ քիշ քան զԳաման » : Յիշէ նա և զվայրի Քարաւէ՝ Կրտմանա կոչելով . Ամիրտ . և ուրիշներն այլ յատկապէս վայրի Քարաւէ անուանեն զԿըրտամանա . Ար . Քարաւիա Ճապափ (Լեռնային) և Քարախա պարրի (Վայրի) . « լաւն ո այն է (ըստ Պատէհնի) որ դեղին լինի . և զիւր շարութիւնն տանի Անխոտն » : — Հասարակ Քարաւէն թէ և ամեն կողմ գտուի , բայց առանձին տեսակներ այլ ունի , որոցէ *Cardamine Hirsuta* կոչուածն յիշուած է ի Բարերդ . — C. *Pectinata* ի Կողմանս Բասենեց . — C. *Huetii* ի Դաշեօփրիւ . — C. *Acris* ի Պին . Կէու , — C. *Uliginosa* ի Կարեն . — C. *Impatiens* ի Հր . Կովկաս :